

ԱԶԱՏ ԽՕՍԲ

ՏԵՏՐ 2

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԲԱՐԻՉ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ» ԶԱԽԵՇՏԱԹԵՐԹԻՆ՝

Այն բոլոր հրատարակութեանց մէջ որոնք տրտա-
սահմանի Հայութեան զանազան կեդրոններուն մէջ կ'ե-
րևան, ճշմարիտ զաւելտաթերթ մը կը պակսէր :

Լոնտոնի «Նոր Կեանք»ը ահա մէկ երկու ամիս է որ
եկած է այդ պակասը լրացնելու :

Գրական գինովութենէ բռնուած խմբագրութիւն մը
ճարտասանական ճիհասկիչութեամբ մը սկսած է հոն,
որ ամէն անգամ խնդուքի անսպառ նիւթ մը կը հայ-
թայթէ մեզի պէս շատերու :

Մենք այստեղ չենք մտաբերեր զբաղիլ զուտ սկզբ-
բունքի խնդրովը որ կայ Յեղափոխութիւնը քարոզելու
կամ մեր յեղափոխական գործունէութիւնը քննադատե-
լու միջև: Մենք ամէն համոզում կը յարգենք, կը բաւէ
որ շտարակուսինք անկեղծութեանը :

Բայց այս նոր «Նոր Կեանք»ը : ինչո՞րք ըսէք այս
լեղապատառ բացազանչութիւնները, այս ծունդը ծուն-
գին վրայ պոռչտութիւնները, այս բոլոր ալապուճուկի
վայնասո՞ւնն են որ պիտի «փրկեն ազգը» : Ապերասան
գրականութեան այս շղթայազերծ սահմանքն է որ ազ-
գին պիտի տայ իր պարտականութեանց գիտակցութիւնը:
Ուրիշ մը ձեռքով, բայց գոնէ վերջապէս գրել գիտցող
Նազարպէկի այս մոլեգին ու խելակորոյս գալարումները
ի՞նչ կապակցութիւն ունին մեր պէտքերուն հետ :

Հապա՛ այն ծիծաղելի ու սոսմէջ սպառնալիքները
որոնք կ'ուղղուին այն պետութիւններուն որոնց սակայն
խնդրագիր կուտան: Հապա՛ այն անանցանելի պատուա-
րը զոր անխտիր կը քաշեն իրենց ու ազգին մնացեալ
բոլոր դասակարգերուն միջև: Հապա՛ այն խաւաքարտէ
շանթերը զոր կ'արձակին բոլոր անոնց որոնք իրենց

պէս չմտածելու ազնուութիւնը ունին : Հապա՛ այն պատուհասները որոցմով « մէջտեղէն պիտի վերցնեն » բոլոր մտաւորականները, վաճառականները, արհեստաւորները, այսինքն ամբողջ ազգը: Ու հապա՛ այն անձնական ու գրական պզտիկ վէճերը որոնք սրենականեր ու սրենականեր կը լեցնեն այդ «պաշտօնաթիւրթիւն» մէջ: Խեղճ Հնչակեան կուսակցութիւն : Խեղճ « Նոր Կեանք » :

ՀԱԶՈՒԱԴԵՊ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ.

«Ժողովուրդին Համար»ը կը յայտարարէ թէ որոշած է որ Պ. Սուրէն Պարթեւեան, — յորմէ հետէ «Նոր Կեանք»ի ամսականաւոր խմբագրապետի պաշտօնը ստանձնած է եւ իր յայտնած նոր գաղափարներն ու համոզումները չեն համապատասխաներ «Ժողովուրդին Համար»ին ուղղութեանը — այլ եւս չաշխատակցի իրեն :

Մենք կը սիրենք այս յայտարարութեան ոգին եւ զայն ներշնչող մտահոգութիւնը : Մեր մէջը շատ քիչ անգամ մեզի տրուած է տեսնել զուտ սկզբունքի այսպիսի համոզուած ու պարկեշտ հաստատում մը : Այն անշիղ, չիլ ու խեցքեկ միացումներուն ու անջատումներուն մէջ որոնց ահա մէկ քանի տարիէ ի վեր ականատեսը կ'ըլլանք արտասահմանի հայ կեդրոններուն մէջ, ահա հազուադէպ երեւոյթ մը որուն առջեւ հաճութեամբ կանգ կ'առնենք: Ա՛լ զգուեցանք տեսնելով որ մեր բոլոր նախընտրութիւնները կամ ատելութիւնները լոկ հիւանդ անձնասիրութիւններու, ախտաւոր մեծամտութիւններու եւ ճղճիմ ու առնագուրկ (ներեցէք բառին խորթութեանը, բայց մեր ըսել ուզելիքը ճշգորէն կը յատկանշէ) հաշիւներու վրայ հիմնուած են: Ա՛լ ժամանակ է որ վարժուիք վերջապէս մեր մտածելու եւ վարուելու կերպերուն մէջ քիչ մըն ալ ընդհանուր շահերու եւ հանրային օգտին մտահոգութիւնէն առաջնորդուելէ :

Ըսենք միանգամայն որ կ'ատենք այն մարդակերի բարքերը որով գրեթէ ամենքս ալ անպատճառ մարդկային ամէն անարգութեանց ու գարշութեանց ընդունարան մը կը նկատունք բոլոր անոնք որ մեզի պէս չեն մտածեր, — բարքեր զորոնք մասնաւորապէս Դաշնակցական վարիչները մտուցին ու տեղաւորուցին մեր մէջ եւ

որուն համար յաւէտ պատասխանատու պիտի մնան հան-
րային խղճմտանքին առջեւ : Միւս կողմէ , մեր բոլոր
գործիչները իրենց անկեղծութեանը ու համոզման ուժին
չափը տուած պիտի ըլլային մեզի , եթէ , «ժողովուրդին
Համար»ին վարիչներուն պէս , հարկը ներկայացած ատեն ,
անձնական յարաբերութիւնները նոյն իսկ անփոփոխ
մնալով՝ գործով անջատուէին անոնցմէ որոնց հետ այլ
եւս ո՛չ մտածութի միութիւն ունին , ո՛չ համոզումի
ներդաշնակութիւն :

Պ. ՉՕՊԱՆԵԱՆ, Պ. ՏԷԼՔԱՍԷ, Պ. ՉԵՐԱՉ.

(Առաջնութեան կարգով.)

Յրանսայի եւ Թիւրքիոյ յարաբերութեանց խզումին
վրայ Պ. Տէլքասէ Հայկական խնդիրը յարուցանելու
որոշում տուած ըլլալով , Պ. Չերազ եւ Պ. Չօպանեան
սեպտեմբեր 2ին Գէ տ'Օրսէ հրաւիրուեցան խորհրդա-
կցութեան համար :

Արտաքին գործերու նախարարը յարգամեծար ընդու-
նելութեամբ իր հրաւիրեալները պատուելով յայտնեց
թէ Հայկական դատին պաշտպանութեանը համար ինչ
ինչ խնդիրներու մէջ լուսաբանուելու պէտք զգալով ,
փափաքած է իմանալ « հայրենասէր եւ խոհուն երկու
քաղաքագէտներուն կարծիքները » :

Անցողաբար ըսենք թէ ո՛չ Պ. Չերազ , ո՛չ Պ. Չօպան-
եան չեն հաճած գլխի թեթեւ հակումով մը իսկ շնոր-
հակալութիւն յայտնել իրենց ուղղուած շնորհալի — եւ ,
ինչո՞ւ չըսենք , արժանաւոր — գրուատիքին համար :
Արմենիի « մեր Տնօրէնը » չափազանց վիրաւորուած
զգացեր է ինքզինքը որ Պ. Տէլքասէ Հայ ազգին մէջ
« հայրենասէր եւ խոհուն ԵՐԿՈ՛Ւ քաղաքագէտ » ի գոյու-
թիւնը կրցած է մտքէն անցընել : Անահիճի խմբագրա-
պետն ալ սաստկապէս առնուեր է , ճի՛շդ միեւնոյն զգա-
ցումէն զրդեալ : Բարեբաղդաբար Պ. Տէլքասէ արեւել-
եան բարբերու « ծանրութեան » վերագրած է այս պըղ-
տիկ (°) զանցառութիւնը :

Արտաքին գործերու նախարարը լուելուն պէս , Պ.
Չօպանեան կը փութայ նախ ինք խօսիլ :

— Պ. Տէլքասէ՛ , Ես . . .

(Այստեղ Պ. Չերազ ի սէր ազգային պատուին — ու թերեւս ալ իր բանգէտի առաւելութիւնը ցոյց տալու անձնասիրութեամբ — կամացուկ մը կը չշնչէ . « Վսեմութիւն ըսելու է եւ ոչ թէ պարզ անունը տալու է : » Անահիտի խմբագրապետը կտրուկ կը պատասխանէ . « Ե՛ս, խորոտարար կը խօսիմ » . ու կը շարունակէ , աւելի զօրեղ շեշտելով անունին վրայ .)

— Պարո՛ն Տէլքասէ՛, Ես գո՛հ եմ իմ ազգիս նկատմամբ ձեր մարդասիրական զգացումներէն : Չուր ջանք սակայն : Հայկական դատը մեռած ու թաղուած է : Հայ ազգութեան հոգեվարքի օրերն են :

Պ. Տէլքասէ կը պատասխանէ զգածեալ .

— Կը զգամ, Պարոն Չօպանեան , թէ վշտին լեզուն կը խօսիք : Իրաւունք ունիք : Ձեր դաւնութիւնը կ'ըմբռնեն : Դժբաղդ Հայ ազգը մինչեւ հիմա զիւանագիտութեան նկատումներուն զոհ եղաւ : Բայց հաւատացէ՛ք որ ձեր ազգին բարեկամն եմ : Իմ գաղափարներուս, եթէ կ'ուզէք ըսեմ՝ իմ զգացումներուս իբր հաւաստիք, կը ներէ՛ք ինձի յիշեցնել մատուցած պզտիկ մէկ ծառայութիւնս : Ձեր մէկ բռնով, Պարոն Չօպանեան, ֆրանսական նաւատորմը Մէրսին զրկել տուի :

Այս յայտարարութեան վրայ , Պ. Չօպանեան մէկէն ի մէկ փայլասփիւռ գէմքով պիշ պիշ կը նայի Պ. Չերազին, որ մոխրի գոյն առած է :

— Այո՛, Պարոն Տէլքասէ, կը յիշեմ թէ ատանկ բան մը ըրիք : Բայց մահամերձ հիւանդին կեանքը քանի մը օր եւս երկարելու դեղ մը, ուրիշ ոչինչ :

Նախարարը երկարօրէն կը բացատրէ թէ քաղաքական կացութիւնը հիմակ շատ նպաստաւոր է Հայկական դատին : Կը շեշտէ Նիքոլա կայսեր գաղափարներուն վրայ . կը բացատրէ անոր Ֆրանսա մտալուտ այցելութեան կարեւորութիւնը Հայաստանի խնդրին համար . Լորտ Սոլզպէրիի բարեացակամութիւնը տարակոյսի ներքեւ է : Ու խորհրդաբար կ'իմացնէ թէ Էիլհէլմ կայսրը արամադիբ է չէզոք մնալ . Կրէտէի խնդրին մէջ հետեւած քաղաքականութիւնը պիտի կրկնէ :

Պ. Չօպանեան նախարարին խօսքերը մտիկ կ'ընէ արձամարձանքի ժպիտով մը , ու անհամբեր յոգնութեամբ : Եւ երբ նախարարը իր բացատրական տեղեկութիւնները կը շարունակէ , Պ. Չօպանեան գլուխը

աջէն ձախ, ձախէն աջ ձօճեցնելով, եւ աջ ձեռքին ցուցամատովը ժխտական նշաններու յայտարարութեամբ կ'ազդարարէ թէ Ֆրանսայի ներկայացուցչին բերնէն ելած ամէն մէկ բառը սնոտի յուսադրութիւն մըն է :

— Բայց վերջապէս, Պարոն Զօպանեան, կ'երգակացնէ նախարարը քիչ մը նեղացած, խնդրեմ որոշապէս բացատրեցէք ձեր յամառ յուսահատութեան շարժառիթը :

— Պարոն Տէլքասէ, Պարոն Տէլքասէ, կը յայտարարէ Պ. Զօպանեան հանդիսաւորապէս, ո՛չ Ֆրանսա, ո՛չ Անգլիա, ո՛չ Բրուսիա կարող են Յաւիտենականութեան անդունդը գլորած ժամերը ետ դարձնել: Հայ ազգը վերջնական կորուստի մատնուած է վասն զի Ե՛ս քանի մը տարի ուշ ծնած եմ :

Պ. Տէլքասէ եւ Պ. Չերազ միեւնոյն դրդումէն մղուած, մէկէն ի մէկ իրարու երես կը նային շմորած: Նախարարը կ'անուշնայ, եւ գթութեան ցաւագին շեշտով մը կը հարցնէ հայրաբար .

— Կը հաճի՞ք արդեօք, Պարոն Զօպանեան, ձեր այդ մտածութիւնը, կամ թէ զգացումը, մեկնաբանել :

— Ո՛հ, կարծեմ թէ արդէն պէտք է գիտցած ըլլայիք, կը փութայ յայտարարել Պ. Զօպանեան: Եթէ Ես քանի մը տարի առաջ ծնած ըլլայի, եթէ 1879ին Ես գոնէ գոնէ տասնեւհինգ տարեկան եղած ըլլայի, իմ ցեղիս գլուխը չէին բարդուեր այն գծադրութիւնները որոնք քաջածանօթ են ձեզ. ինքնավար, անկախ Հայաստան մը կը տեսնէիք այսօր, ու Եւրոպա եւ Ասիա հիմնովին տարբեր կացութեան մը մէջ կը գտնուէին :

— Ի՞նչպէս, ի՞նչպէս, կը հարցնէ Պ. Տէլքասէ :

Իր կոչումին անկեղծօրէն հաւատացող Ապստոլին բորբոքեալ կը շարունակէ .

— Այո՛, եթէ Ես 1879ին գոնէ տասնեւհինգ տարուան եղած ըլլայի, աւելի չեմ ըսեր, թո՛ղ պիտի չտայի որ Ներսէս Պատրիարք Պերլին աղաչաւորներ դրկէր. Եւրոպայի քաղաքականութիւնը պիտի սորվցընէի Օտեանին ու մեծ սխալներէ ետ պիտի կեցնէի զինքը. Սերվիլէնը իր ճամբէն ետ պիտի դարձնէի. Նուպարին պիտի բացատրէի թէ ի՛նչպէս Պերլին երթալու էր՝ գործադրելու համար իրեն տալիք յատուկ հրահանգներս : « Պատասխանատուութիւնները » յօդուածս զոր անշուշտ կարդացած էք, Պարոն Տէլքասէ, եթէ խորապէս ու-

սուսնասիրած ըլլայիք, ինչպէս պարտականութիւննիդ էր, այս ամէնը այդ յօդուածին մէջ պիտի տեսնէիք : Ան ատեն ո՛չ դուք հայկական խնդրով ժամավաճառ պիտի ըլլայիք, ո՛չ ալ ինծի մինչև այս տեղը գալու ձանձրոյթը պիտի պատճառէիք : Այո՛, Պարոն Տէլքասէ, կը կրկնեմ ու կը վերջացնեմ, Հայ ազգը կորսուած լինցած է, քանի մը տարի իմ ուշ ծնած ըլլալուս պատճառաւ :

Պ. Չերազ որ մինչև այդ բողբէին անտոգիւտ վարմունք մը ունեցած էր — միակ բացառութեամբ մը —

Պ. Չերազ որուն վրայ կը հանգչէր, ակներբեւ կերպով,
Պ. Տէլքասէի բոլոր յոյսը, յանկարծ ա՛լ ինքնիրմէն ելած, վեր կը ցառաքէ, եւ մոռնալով իսկ թէ՛ ո՛ւր է, խելակորոյս կը սկսի պոռալ Պ. Տէլքասէին.

— Միւսիւ, Միւսիւ, աս մարդը զիս կը նախատէ կոր :

Պ. Տէլքասէի շուարման պահուն, ի Պերլին պատգամաւորը երկվայրկեանի մը համար կորսնցուցած իր պաղարիւնութիւնը վերստին կը գտնէ, եւ արասասնած ամէն մէկ բառին վրայ կանգ առնելով կը յայտարարէ.

— Այո՛, վսեմաշուք Տէր, այս պարոնը զիս կը նախատէ կոր : Եթէ ինք ուշ ծնած է, ե՛ս ժամանակին ծնած եմ : Ուրեմն ինչո՞ւ իմ ազգս անիրկելի կորուստի պիտի դատապարտուի :

Պ. Տէլքասէ քրքիջը զսպելու յայտնի ջանք մը կ'ընէ :

— Այո՛, կը շարունակէ Պ. Չերազ լրջօրէն, նախախնամութիւնը զիս ճիշդ ժամանակին պարգեւեց ազգիս : Եթէ այս պարոնը 1879ին գոյութիւն չունէր, ես սակայն ունէի : Ես վարեցի Հայկական խնդիրը : « Պատասխանատուութիւնները » յօդուածը ջախջախեցի :

Ու Պ. Չօպանեանի մուտուքներուն անտարբեր՝ Պերլինեան զիւանագէտը կը շարունակէ անայլայլակ .

— Ներսէս Պատրիարք իմ հրահանգներուս համեմատ շարժեցաւ, Օսեան բերանը չէր բանար առանց ինէ դաս առնելու, Սերվիչէն բառ մ'չ չէր արտասաներ ինծի խորհուրդ չհարցուցած : Գործին, Կ. Պոլսոյ իտալական զեսպանը, որուն թիւրքերը « մայմուն » կ'ըսէին (ու Պ. Չերազ ինքն իր ըսածին վրայ բարձրաքթիջ կը խընդայ), Գործին Պոլսէն իր մեկնումը փութացուց որպէս զի ինծի ընկերանալու բաղդը ունենայ շողհնաւին մէջ :

Արեւելեան խնդիրը պարզեցի իրեն , ու շատ երախտապարտ մնաց : Չեր նախորդներէն Վատինկիթոն բարեկամս , Նար-Պէյն ու զիս լսելէ յետոյ , յայտարարած է թէ « Մեծ քաղաքագէտը Պ. Չերագն է , եւ հզօրապէս պիտի ազդէ Արեւելեան խնդրին կոնճոտութեանց հարթմանը վրայ » , ու չսխալեցաւ ալ : Ու այս պարոնը , նախանձոտութեամբ , Նուպարը ինծի հետ բաղդատելո՛ւ ելեր է : Պիզմարք . . .

Արտաքին գործերու նախարարը ինքզինքը ա՛լ բաւական լուսաբանուած համարելով ոտքի կ'ելլէ ունկընդրութիւնը վերջացնելու . ու Պ. Չօպանեանի դառնալով .

— Պարոն , կ'ըսէ , Հայ ազգը բարերազդ է որ դուք քիչ մը ուչ ծնած էք :

Իսկ Պ. Չերագի կողմը հակելով ,

— Պարոն , կը շարունակէ , Հայ ազգը դժբաղդ է որ դուք ալ քիչ մը կանուխ ծնած էք :

ՆՈՐ ԼԵՐԱՆ-ՔԱՐՈՉԸ .

Մանչեստրի քաջածանօթ այլ վաղազրաւ «Վաղուան Չայնը» , որ մայիս 15էն ի վեր Լոնտոն վերսկսած է հրատարակուիլ « Նոր Կեանք » անունով , սաստիկ մտրակողական ուղղութեան մը կը հետեւի :

Մտրակին « անկեղծ » շառաչը զարմացք ու զայրոյթ կը պատճառէ : Չարմանքը կ'ըմբռնենք . զայրոյթը , ո՛չ Ո՞չ ապաքէն « Վաղուան Չայն-Նոր Կեանք » միացեալ թերթիքը մեր մէջ դեռ նմանը չտեսնուած անկեղծութեան ապացոյցը կուտան , նախեւառաջ մտրակելով նոյն իսկ իրենց կուսակիցները որոնց անունով կը խօսին :

Մտիկ ընենք : Օգոստոս 1ի թերթը կը գոռայ (էջ 228 , սիւնակ Չրդ) խօսելով Հնչակեան եւ Դաչնակցական կուսակցութիւններու միութեան խնդրին վրայ .

« Իւրաքանչիւր կուսակցութիւն ջանաց հասարակութեան ցուցնել թէ ինքն է միութեան անկեղծ ու « միակ փափաքողը : Իժբաղդաբար տեսնուեցաւ որ կուսակցութիւնները այդ յայտարարութիւնը կ'ընէին ո՛չ « թէ միութիւնը տիրական ու անհրաժեշտ հարկ մը նկատուի , այլ անոր չնորհիւ ժողովրդականութիւն չահե- « լու ողորմելի մտահոգութիւնով մը :

« Պէ՛տք է վերջ մը տալ սակայն այս երկրբնի կա-
« ցութեան: Պէ՛տք է վերջ մը գտնեն միութեան անու-
« նին վատ շահագործումները: »

Թէ Հնչակեան պաշտօնաթերթ մը ամբաստանէ Դաշ-
նակցականները որ միութեան գաղափարին չնորհիւ
« Ժողովրդականութիւն շահելու ողորմելի մտահոգու-
թիւնը » ունեցեր են, թէ միութեան անունով « վատ
շահագործումներ » ըրած են, ամբաստանութիւնը նորու-
թեան հրապոյրը չունի: Շատոնց է նկատուած է որ
« գայլը դայլին աւետարան չի կարդար »: Բայց յայտա-
բարել թէ ինքն ալ այդ « օղորմելի մտահոգութիւնը »
ունեցեր է, ինքն ալ միութեան անունին ներքեւ « վատ
շահագործումներ » ըրած է, ընդունինք որ մեր հանրա-
յին կեանքի պատմութեան մէջ առաջին անգամն է որ
կազմակերպեալ մարմին մը այսպիսի անկեղծ յայտարար-
ութիւն մը կ'ընէ: Ա՛լ ինչո՞ւ բարկանալ երբ յարձակումը
ուրիշներուն դէմ ալ տեղի կ'ունենայ:

Ընկերը սիրելու օրէնքը 1868 տարի առաջ հաստատ-
ուեցաւ. թէ եւ քիչ մը վերացական, — բարեպաշտնե-
րուն սիրտը չկտարելու համար չենք ըսեր « րոլորովին » —
բայց բանաստեղծական բանաձեւ մըն է. « Սիրեցես զըն-
կեր քո իրբեւ զանձն քո » ըսած են: Բայց զեւ ճշգրիտ
բանաձեւ մը չէր սահմանուած ատելութեան համար:
Մարդ մը ուրիշը ի՞նչպէս ստելու է: Ատ ալ գտնուե-
ցաւ: Երբ Հնչակեան պաշտօնաթերթը Դաշնակցական-
ները անարգել տալու համար նախ ինքզինքը կը սկսի
անարգել, ա՛լ կրնաք ըսել. « Անարգեսցես զընկեր քո
իրբեւ զանձն քո: »

ԱՆԲՍԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ.

Պ. Մանթաշեան, ի պատասխանի մեր նամակին,
անձնական պատասխան մը զրկած է մեզի, որ սակայն
հրատարակութեան սահմանուած չէ: Սա չափը ըսենք
միայն որ Պ. Մանթաշեան կը յայտարարէ որ « ինք ին-
չո՞վ է մեղաւոր » եթէ զինքը աղերսագիրներով ուժա-
կոծող, առտուընէ մինչեւ իրիկուն իր պանդոկին զբանը
առջեւ սպասող, ամէն կծղմէ յանձնարարական նամակ
բերող եւ ի բամէն քայլին իրեն հետեւող օղորմելիներ-

րուն « մէկ քանի ֆրանք է տալիս իբր ողորմութիւն », պորզապէս « նրանցից օձիքը նքրծնելու համար » :

Կ'ընդունինք այս ամենուն ճշգրութիւնը: Բայց դիտել կուտանք թէ ասիկա փախուստի ճամբայ մըն է լոկ, եւ չի կրնար զինքը զերծ կեցնել այն բարոյական ծանր պատասխանատուութենէն զոր մասնանիշ ըրած էինք:

ՓՈՅԱՒԱՐՁ ԶԻՋՈՂՈՒԹԻՒՆ.

Վերջին վայրկեանին կ'իմանանք թէ Նոր Կեանքի առաջարկած « Համահաւասար զոնաբերութիւններու » հիման վրայ միութեան բանակցութիւնները փութով առաջ տարուելու վրայ են Հնչակեան եւ Դրօշակեան կուսակցութեանց միջև: Եղած զիջողութիւններէն դատելով կ'երեւայ որ անկեղծօրէն ժողովրդին օգտակար ըլլալու եռանդէն բռնկած են երկու կողմերն ալ:

Այսպէս, Նոր Կեանք կը հաւանի այլեւս չընդունիլ չվճարուելու յամառող բաժնեգիւնները, իսկ Դրօշակ կը խոստանայ մերժել ամէն նուիրատուութիւն որ անպոյ քաղաքներու մէջ կը հաւաքուին երեւակայական խումբերու ձեռքով:

Նոր Կեանք կը հրաժարի կեդրոնացման գրութենէն, Դրօշակ կը լքանէ ապակեդրոնացման գրութիւնը, եւ երկուքը մէկանց կ'ընդունին տարակեդրոնածիզ գրութիւնը:

Նոր Կեանք կը խոստանայ այլեւս « խաղաղասիրական առաքելութիւններ » չզրկել Կ. Պոլիս, ի փոխարէն Դրօշակ կը խոստանայ այլ եւս հայդուկախումբներով չչէնցընել Սպաղանքն եւ Սուշի գեղերը:

Նոր Կեանք կ'ընդունի Դրօշակ անունով մկրտուիլ, եւ Դրօշակ՝ Նոր Կեանք տիպոգրոսով լոյս տեսնել:

Ինչո՞ւն պիտի երթայ Լոնտոն. Կեդրոնը պատրաստ է ժրնէ՞վ փոխադրուելու:

Եւ եթէ կան զեռ միամիտներ որոնք տարակուսանքի մրմունջներ կը յաւակնին լսելի ընել միութեան այդ փոխաններուն մասին, եթէ կան, կը կրկնենք, զեռ միամիտներ որոնք չեն հաւատար որ Արիւնի Յաճախանքի Վաղորդայնին Ընդվզումի Ճամբուն Կարմիր Գողգոթային եղեռնականօրէն Դժնդակ Շաւղին վրայ անհունօրէն

երկնցող Ձեռքեր եղբայրորէն կը միանան իրարու, տա-
րամերժօրէն փրկելու համար սրբագնօրէն նուիրական
Դասը, այդպիսի դաւածան միամիտներու երեսին կը
գոչենք .

— Չեղորներ . . .

ՁՐԻԱԲԱՐ .

— Երկու հարիւրական ֆրանք տուեցի շներին որ
չծեծկուեն, ու իրար հետ հաշտ ապրեն :

Բառ առ բառ Պ. Մանթաշեանի խօսքերն են ասոնք,
բարեգաքնակ այն երեք խմբագիրներուն համար որոնք
ժամ մը առաջ հրապարակի վրայ իրարու սխերիմ թշնա-
մի՛ ժամ մը ետքը, պ. Մանթաշեանի առատաձեռնու-
թենէն յետոյ՝ իր սենեակին մէջ սրտագին իրար կը համ-
բուրէին :

Պ. Մանթաշեանի համար կ'ըսեն թէ առաջնակարգ
գործի-մարդ մըն է: Եւ սակայն, այս պարագային գոնէ,
ատոր սպառնոյցը տուած չէ: Իր գրամի մարդու սնվրի-
պելի հոտառութեամբը, հասկնալու էր որ այդ մարդիկը
նարիւր ֆրանքով ալ իրար կը պագնէին. ո՞վ գիտէ՝ թե-
րեւս քիչ մըն ալ պակասով: Այս թելադրութիւնը ձրե-
ւարար կուտանք ահա Պ. Մանթաշեանին՝ իր յառաջիկայ
գարնան այցելութեանը ատեն անկից օգտուելու համար,
որովհետեւ, տարակոյս չկայ որ, այս աշնան «հունձ-
քին» համը բերաննին մնացած, մեր պատուարժան խըմ-
բագիրները գարնան նորէն «կատաղի՛» թշնամիներ
պիտի դառնան իրարու :

ՏՈՔԹՈՐ ԶՊԱՆԵԱՆ .

Մինչեւ հիմա աի ի բերան ապշութեամբ կը նայէինք
այն ամենամեծ տաղանդին որ պ. Ա. Զօպանեան անու-
նին տակ կը շրջի Բարիզի մէջ . ամենանրբին ու բաղ-
խողական տաղանդ դիւանագէտի՛ որ մէկ շարժումով
նաւատորմիդներ կը թռցնէ Տաճկաստանի ջուրերը. վըրձ-
նագեղ տաղանդ գեղարուեստական՝ որ գիտէ գնահատել
հին եւ նոր նկարչութիւնը եւ մասնանիչ ընել մեծ վար-

պեաններու պզտիկ թերութիւնները . նրբականջ տաղանդ զաշնակալից՝ որ «Պիթովենն» ու Վակնէրը «խորապէս կը հասկնայ» . վերջապէս անբաղդատելի տաղանդ մուրացկանի՝ որ կրցած է խրոխտութիւն մտցնել այդ անարգ ասպարէզին մէջ : Բայց ինչ որ չէինք գիտեր այդ տաղանդալից կոյտին մէջ չիրոկրատիկ մըն ալ պահուրտած է եղիր որ յանկարծ ծայր տուաւ վերջերս տարօրինակ կերպով պարբերական եւ սակայն յոյժ գեղարուեստական «Անահիտ»ին մէջ :

Իսթէրիի նուիրուած խորագնին ուսումնասիրութեամբ մը , որուն մասին պ. Երուանդ Մանուէլեան վկայած է, գիւղէն դարձին , թէ «նոյն իսկ Ֆրանսացի բրոֆէսորներ անկարող են գրելու ասանկ բան մը» , մեծ հիւանդը կ'ընդունի թէ ինք իսթէրիք մըն է , բայց կ'ուզէ բարեհամբոյր , մտաւորական ամենաբարձր կարողութիւններով օժտուած իսթէրիք մը ըլլալ : Դունապանի կամ լուսացարարի իսթէրին իրեն համար պզտիկ կուզան . ինք մեծ իսթէրին , ամէնէն մեծը կ'ուզէ : Արդեօք այս մեծամոլութիւնը , որուն մէկ քանի տարբեր եւ վրդովեցուցիչ նշաններ տեսանք վերջերս իր վրայ՝ մեծ իսթէրիին մասն կը կազմին :

Ինչօքը բժիշկներուն է , կամ պատկերահաններուն եւ կամ . . . առտուն կանուխ ելլողին :

« ԵՐԿԴԻՄ ՈՒԹԻԻՆ ՉԵՆՔ ՈՒՉԵՐ . »

«Անպայման միութեան» համար Հնչակեան պաշտօնաթերթին առաջարկած պայմաններէն հետեւեալները մեր մասնաւոր ուշադրութիւնը գրաւած են .

« 3. Կեդրոնական Վարչութիւնը պատրաստ է ամբողջապէս հրաժարիլ :

« 4. Պատուոյ խօսք Կեդր. Վարչութեան կողմէ ապագայ միացեալ մարմին վարչութեան մէջ ո եւ է պաշտօն չստանձնելու : »

Կը հարցնենք . Որոնցմէ՞ կը բաղկանայ այդ կեդրոնական վարչութիւնը : Միեւնոյն անձնաւորութիւններն են որոնք 1896էն ի վեր գրեթէ շարունակ կը վարեն

Հնչակեան կուսակցութիւնը , թէ ամբողջապէս կամ մասամբ նոր անձեր են :

Առանց երկդիմութեան պէտք է պատասխանել այս հարցումին :

Իրաւունք ունինք այս պահանջումը բնելու , հիմնուելով հետեւեալ տեղեկութեան վրայ :

Կը լսենք թէ այն անձերը որոնց շուրջը կը դառնային Դաշնակցականներու պահանջումները , անոնք Հընչակեան կեդրոնէն առ այժմ քաշուած են : Ուրիշ անձեր եկած են , տեսակ մը « յարդէ մարդեր » , որոնց մասին ո եւ է առարկութիւն մը չէ եղած գուցէ , քանի որ անձանօթ են : Արդ , այդ անձերն են որ կը խոստանան « ամբողջապէս հրաժարիլ » եւ « ո եւ է պաշտօն չստանձնել ապագային » : Լա՛ւ : Միութեան յաջորդ օրը 1896էն ի վեր գործի վրայ դառնուողները պիտի ուզեն իրենց մասնակցութիւնը պահել նորակազմ մարմինն մէջ , ուր դուրս ձգուած պիտի ըլլան Դաշնակցականներու արդի վարիչները :

— Բայց , պարոններ , դուք չէի՞ք որ « պատուոյ խօսք » տուիք չմասնակցիլ նորակազմ վարչութեան :

— Ներողութիւն , պարոններ , կեդրոնական վարչութիւնն էր որ այդ խօսքը իրեն համար տուաւ : Ու մենք չէինք այլ եւս անդամակցեր կեդրոնական վարչութեան երբ այդ տողերը հրատարակուեցան :

Կը մնայ դիտնալ թէ Դաշնակցականները պիտի ուզեն իյնալ այս վրան—բաց ծուղակին մէջ : Ամէն պարագայի մէջ , մեզի պէս շատեր իրաւունք ունին հարցնելու թէ որո՞նք են Հնչակեան արդի կեդրոնական վարչութեան անդամները որոնք իրենց անձին համար այդ խոստումը կուտան : Հինե՞րը , թէ նորեր որոնց համար դաշնակցականները ո եւ է բան մը չեն ուզած ըսել :

Երկդիմութիւն չե՛նք ուզեր :

ԱՆԻՐԱՒ , ԱՆԻՐԱՒ .

Պ. Ա. Զօպանեան «Անահիտ»ի Մանթաչէֆապարտ թիւին մէջ խօսելով Պատուոյ Ստեանին մասին հետեւեալ անաթեմայով կը վերջացնէ իր պաշտպանողականը .

« Որ եւ է Հայ որ երկվայրկեան մը Պ. Իսքէնտէն

ու զիս կարող կարծէ մեզի վերագրուած այդ արարքները գործած ըլլալու . արժանի չէ որ իր դատումը որ եւ է կարեւորութիւն ունենայ մեզի համար : Մարդ պէտք է բաղձայ յարգուիլ այն անձերէն միայն որ իրենք իսկ յարգանքի արժանի են :»

Արդ , Զէյթունի գրքին տպագրութեան զեղծումնու-րու գրոյցը առջին անգամ Բարիզի մէջ տարածողները եղած են պ. Երուանդ Մանուէլեան եւ պ. Յովհաննէս Գարիպեան : Դպրոցի իր այդ սիրելի դասընկերներուն դատումն է որ այնքան խստորէն կը դատապարտէ պ. Զօպանեան : Եթէ պ. Երուանդ Մանուէլեան յարգանքի անարժան մէկն է , ինչո՞ւ ի պատիւ իրեն հացկերոյթ մը սարքեց անցած տարի : Եւ ինչո՞ւ երկրորդին նման յարգանքի անարժան մէկու մը սկեսկակից է մինչեւ հիմա : Կ'արժէ՞ր այսպէս հրապարակաւ խորսնել խեղճ պ. Գարիպեանը որ այնքան անձնութիւնամբ խոհարարի համեստ ալ պակաստ պաշտօնը կը վարէ իր քով , Օհաննէս աղբար անունին տակ :

ՁԱՐԸ ԵՒ ԲԱՐԻԶԻ ՀԱՅ ԴԻՒԱՆԱԳԻՏՆԵՐԸ .

Լ'Առմենիի « մեր տնօրէնը » իր կազմաբախթիւթիւն վերջին թիւին մէջ գրած էր որ « մեր տնօրէնը » , որ միանգամայն « մեր հաւաքիչը » , « մեր ջրուէիչը » , « մեր խմբագիրը » , « մեր օգնական խմբագիրն » ու « մեր հրատարակիչն » է , վենետիկ պիտի մեկնի ներկայ զսնուելու համար Մխիթար արքայի երկհարիւրամտակի հանդէսին :

Եւ սակայն պ. Մինաս Չերազ չէ մեկնած վենետիկ եւ կրք իրեն զիտողութիւն ըրած են այդ մասին իր այնքան սակաւաթիւ որչափ միամիտ ընթերցողներէն ոմանք , պատասխանած է անուշի լրջութեամբ մը .

— Չարին գալուստին պատճառաւ չգացի , որովհետեւ ներկայութիւնս անհրաժեշտ էր հոս (վաւերակալն) :

Մեր առած տեղեկութիւնները շատ աւելի գետնաքարչ բացատրութիւն մը կուտան « մեր տնօրէն » քն ճամբորդութեան ջուրը իյնալուն :

Կ'երեւայ որ պ. Չերազ կը յուսայ եղեր ինք ընտրուիլ իրրեւ ներկայացուցիչ Բարիզի հայ գաղթականու-

թեան եւ ուղեւորութիւնը կատարել ի հաշիւ անոնց , բայց Բարիզի Հայերը պ. Բասմաջեանը որոշած ըլլալով զրկել , « մեր տնօրէնը » տեղը նստեր է :

Միւս կողմէ կը լսենք թէ պ. Ա. Չօպանեանն ալ մտազիր է եղեր այդ ուխտագնացութիւնը կատարել Չեւրագեան պայմաններով եւ իր յոյսերուն դերեւ ելլելն է պատճառ որ սիրտը դառնութեամբ լեցուցած է եւ չէ ուզած այս « ապերախտ ազգ »ին համար իր նաւատորմիցը զրկել այս անգամ Տաճկական ջուրերը, արգելելու համար Մուշի ջարդերը :

Ոմանք ալ կ'ըսեն թէ այդ միջոցին պ. Չօպանեանի նաւատորմիցը Տէօնքէրք կը գտնուի եղեր ֆրանսականին հետ մասնակցելու համար նաւային հանդէսին : Չրոյց կայ նաեւ որ չէ թէ Տէօնքէրք , այլ « ռիւ Տէօնքէրք » գացեր է ցոյց մը ընելու համար պ. Մ. Կալիպաքճեանի գրասենեակին գիմաց :

ԳԻՇ ՀԵՏԵՒԱՆԻ.

Դերասանութիւնը որ կեղծաւորութեան արհեստն է գերազանցօրէն , կրնայ ազգել մարդուս նկարագրին՝ երկդիմի , կեղծաւոր եւ յեղյեղուկ բարքեր առաջ բերելով անոր մէջ : Այս հարցումը ինքնաբերաբար մտքերնիս կ'իյնայ տեսնելով նախկին դերասան մը որ ատենօք Օրթագիւղ « Հաւատք , Յոյս , Սէր » թատերախաղին մէջ դեր մը կատարած է եղեր բաւական յաջողութեամբ եւ որ հիմակ Բարիզի մէջ ալամանդի միջնորդութեամբ կը զբաղի : Հակառակ ասպարէզի այսքան արմատական փոփոխութեան մը , նախկին դերասանը պահած կ'երեւայ իր հին դիմակները եւ ամէնուն տարբեր երեսներով կը ներկայանայ : Շատեր կը հարցնեն մեզի թէ իր բնական երեսը ո՞րն է արդեօք. պիտի պատասխանենք երբոր առիթը գայ :

ՎԱՐԱԴՈՅՐԻՆ ԵՏԻՆ.

Բարիզի անճառելի Պատուոյ Ատեանին առջեւ , Պ. Բասմաջեան ձեռքը կուրծքին վրայ կը վկայէր թէ ինք երկու տարի է որ գիտէ թէ Պ. Չօպանեան ոուս կառավարութեան առաջարկած է իր գաղտնի ծառայութիւնը :

Բանասերի խմբագիրը սակայն՝ իր համոզումը իրեն պահած՝ մինչև վերջերս փութկոտորէն կը սլքտար Պ. Չօպանեանի շուրջը, որ ահա յանկարծ իր մինչև հիմակ խնկարկած գիտնականը մեզի կը ներկայացոյնէ իբր դռնհիկ խաբերայ մը : Միւս կողմէ, Պ. Չօպանեան, իր Ատոնիսի արգարացի — օ՛հ ո՛րքան — գերազանցութեանը կրթնած՝ շէնքանգէ կ'անուանէ Պ. Հախումեանը, որուն համար, ինչպէս գիտնէք, հասարակ escroc մըն է Անահիտի խմբագիրը, այս մասին անշուշտ շատ տարակարծիք չըլլալով Պ. Չերագի որ ի՞նչ հաճոյակատարութեամբ մը կը նախագահէր Պ. Չօպանեանը դատապարտող հրապարակային ժողովին :

Այս բոլոր մարդիկը սակայն, 200 Ֆրանքի փոխարէն, իրար կը համբուրեն եւ՝ նոյն սեղանին շուրջը բոլորած՝ իրարու կենաց կը խմեն :

Ի՞նչպէս կ'որակէք այս վարնոց գերասանները որոնք թատերաբեմին վրայ իրարու սուր կը քաշեն, եւ վարագոյրին ետին իրարու գիրկ կը նետուին .

Հա	Խ	ուսեան
Չօպ	Ա	նեան
	Բ	ասմաջեան
Չ	Ե	րազ
	Բ	անասէր
Ա.Ն	Ա	նիս
Ժամա	Ն	ակ
	Ե	ւ
Ա.	Բ	մէջի

* * *

ՊՈՒՂ՝ ՄԻՇ՝Ի ՎՐԱՅ.

— Ի՞նչ տարբերութիւն կայ խօսելու ելլող մանուկներուն եւ մեր Բարիզի մեծապատիւ մուրացկաններուն միջեւ :

— Շատ չնչին տարբերութիւն մը : Մանուկները « մա՛ մա՛ » կը ձայնեն շարունակ, ու մեր Բարիզի մեծապատիւ մուրացկանները՝ Մա . . . Մա . . . նվազօֆ :

* * *

— Եղբայր սակայն, Պ. Զօպանեանն ալ աղչին համար մեծ ձեզ կը քահի :

— Օ՛հ, տարօրինակ բան մը չէ ասիկա՝ taper ընելու վարժ մարդու մը կողմէ :

ԳԱՆԻ ՈՐ Կ'ՈՒԶԷ ԿՈՐ.

Պ. Գրիգոր Գալֆայեան անուն մէկու մը, զոր պէտք չէ չիօթել պ. Գրիգոր Փրօֆ-Գալֆանեանի հետ, անունը յիշած էինք մեր նախորդ թիւին մէջ եւ զգացուցած էինք քանի մը տողերով որ այդ անձը շատ աւելի պիտի շահէր ինքզինքը չինթարկելով հանրային հետաքրքրութեան :

Զարմանալի չէ՞ որ այդ պարոնը յանդգնութիւնը ունեցած է մենէ խնդրելու որ ըսենք իր մասին գիտցածնիս :

Մեր գիտցածներէն մին, եւ գուցէ թեթեւագոյնը, այն է որ այդ Գրիգոր Գալֆայեանը 1896 թուականին Աթէնքի մէջ, ի նպատակ հայ փախստականներու տրուած թատերական ներկայացման մը առթիւ, դրամական գեղծում գործած եւ վոկսուած է Յանձնախմբին մէջէն :

Եթէ ասիկա բաւական չէ իր համբաւին համար կրնայ երկրորդ նամակ մը ղրկելով մեզ խնդրել որ ուրիշ մանր մունր տեղեկութիւններ ալ տանք իր մասին :

Զմոռնանք սա պարագան որ յիշեալ պարոնը պ. Արմենակ Իփէրեանի հետ մրակ պաշտպանն էր պ. Զօպանեանի, Բարիզ գումարուած Գաղթականային ժողովին մէջ :

«Ա.ԶԱՏ ԽՕՄԲ»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Ազատ Խօսքը պարբերական հրատարակութիւն մը պիտի լլլայ սարին առ հունուան 12 թիւով, բայց հաւանական է որ այդ թիւին մէջ չսամանափակուի մեր հրատարակութիւնը, հետեւաբար որոշած ենք բաժանուրագրութիւնը թիւի վրայ ընել :

12 թիւի բաժնեգինն է Եւրոպայի եւ Ռուսիայի համար 5 ֆր. իսկ Ամերիկայի համար 1 սոյար : Բաժնեգինը կանխիկ է :

Ազատ Խօսքի մէկ թիւին գինն է 50 սանթիմ :

Մեր հասցեն է

M. PERRIER (Pour AZAD KHOSK)
4, rue des Guillemites PARIS (1V^{me})

Le Gérant : R. CHOTARD.

Imp. D. DIKRAN. — 15, Boulevard Arago, PARIS.